ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 111/10

Քաղ. Երեւան 28 ապրիլի 2010թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. ապրիլի 28-ի նիստում (արձանագրություն N79/2) քննարկեց «Alpine Bau GmbH» ընկերության ներկայացուցիչ՝ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ռ. Մանասերյանի, 2009թ. նոյեմբերի 11-ի դիմումը համակցված ապրանքային նշանի «ALPINE» N4007 գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ՀՀ տարածքում գրանցված դասերի ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 2009թ. դեկտեմբերի 2-ին սեփականատեր «Alpine Electronics Inc» ընկերությանը ներկայացված ծանուցման ստացման վերաբերյալ գործակալությունը հետծանուցում չի ստացել եւ այդ իսկ պատճառով հետաձգվել էր հարցի քննարկումը, մինչեւ մարտի 5-ի նիստը: Դեկտեմբերի 22-ի նիստի որոշումից հետո, նորից ծանուցվել է սեփականատիրոջը: Այս անգամ էլ հետծանուցում չի ստացվել, ինչպես նաեւ բողոքարկման խորհուրդը դիմումի վերաբերյալ որեւէ գրավոր արձագանք սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցչից չի ստացել: Մարտի 24-ի բողոքարկման նիստում, հիմք ընդունելով վերոգրյալը, բողոքարկման խորհուրդը հանգեց այն եզրակացության, որ թերացում կա ծանուցման հետ կապված եւ փաստեց ներկայացուցչին գտնելու եւ նրան նորից ծանուցելու անհրաժեշտության մասին, այդ իսկ պատճառով բողոքարկման խորհուրդը որոշվեց հետաձգել հարցի քննարկումը:

Մարտի 24-ից մինչեւ ապրիլի 28-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը ստացել էր դեկտեմբերի 2-ին եւ հունվարի 13-ին սեփականատիրոջը ուղարկված ծանուցագրերի հետծանուցումը, որը հիմք է հանդիսանում պատշաճ ծանուցման: Հարկ ենք համարում նշել, որ Բողոքարկման խորհուրդը «ALPINE» N4007 ապրանքային նշանի սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցչից որեւէ գրավոր արձագանք չի ստացել:

Ընդհանուր քննարկման արդյունքում՝ հիմք ընդունելով վերոգրյալը եւ առաջնորդվելով «Ապրանքային եւ սպասարկման նշանների եւ ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով, ինչպես նաեւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 80-րդ կետի 1 ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Alpine Bau GmbH» ընկերության նոյեմբերի 11-ի դիմումն ամբողջությամբ, եւ դադարեցնել «ALPINE» N4007 համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան